ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 186 -Ա
16 ՆՈՅԵՄԲԵՐ 2021Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ԹԻՎ 59 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունում իրականացված ներքին աուդիտի արդյունքների վերաբերյալ 2021 թվականի նոյեմբերի 9-ին հաստատված վերջնական հաշվետվությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 59 որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի «Վարչության գործառույթները» վերնագրով թիվ 2 բաժնի 3-րդ կետում՝

1) կատարել հետևյալ լրացումները.

ա. «ա» ենթակետը «ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերի կազմման» բառերից հետո լրացնել «և մուտքագրման աշխատանքները» բառերով:

բ. «ե» ենթակետը՝ «ընթացիկ ֆինանսավորումը և դրանց նպատակային օգտագործումը» բառերից հետո լրացնել «LS ֆինանսական համակարգի միջոցով» բառերով:

գ. «է» ենթակետը «կազմակերպում է հաշվապահական հաշվառումը վարելու» բառերից հետո լրացնել «եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկման,» բառերով:

դ. «ժա» ենթակետը «սահմանված ժամկետում ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն» բառերից հետո լրացնել «և մուտքագրումը Client-Treasury համակարգ» բառերով:

ե. «ժդ» ենթակետը «վերահսկողություն է իրականացնում մարզային ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ներին ամրացված և սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման

և տիրապետման օրինականության նկատմամբ» բառերից հետո լրացնել «և մուտքագրում պետական գույքի էլեկտրոնային հաշվառման համակարգ» բառերով:

զ. «ժե» ենթակետը «միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման և ներկայացման աշխատանքները» բառերից հետո լրացնել «և մուտքագրում բյուջետային ծրագրերի ծախսակազմման և ավտոմատացված համակարգ» բառերով:

2) «իդ» ենթակետից հանել «մարզում գործող հիմնարկ–ձեռնարկություններում, համայնքներում» բառերը:

3) Դադարեցնել «թ» և «ժը» ենթակետերի գործողությունը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

18.11.2021

X

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN DAVIT 4105850407

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Երևան